



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. Տարի - ՆՈՅԵՄԲԵՐ 1936 12^{me} Année - Novembre 1936

Խմբագրական

Ճրանտական բարեկարգեալ եկեղեցիներու միութեան Հարցը

Զ. Բ. Պ.

Հոգ. կեանք

Դժբաղ դուրսեան բարեբաղ դուրսիւնը

Ասիայի եօթը եկեղեցիները

Վեր. Ա. Օ. Փափազեան

Կենաց ածուկներէն

Աղիտաբեր ընտրութիւն

Սամուէլ Պ.

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Կենսագրական

Ճան Ուէսլի

Պատանեաց


Քրիստոնեային վկայութիւնը ընտանիքին մէջ

Մինչեւ ի մահ



Արժնիցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Լ. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ քէ
Անոր Կանգիտար մանկու խոսամունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Քանկի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
սիրտի գայ ու պի-
տի չուշանայ:

Եբր. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՐԵՐ 1956

ԹԻԻ 11



ՑՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Դ.

ՎԵՐՋՍԲԱՆ

Միութիւնը ինքնին փափաքելի է: 25° որ
Աստուծոյ կամքն է, ո՛ր յ է: Սակայն միութիւնը
այս արժէքներն ունի եթէ կատարուի բացարձակ
միաբանութեամբ, անկեղծութեամբ, առանց մը-
տաւոր եւ գործնական վերապահումներու: Երբ
միացում մը կ'ստեղծուի բռնագործով կերպով,
եթէ իր մէջ կան տարտամ եւ կասկածելի տար-
րեր եւ նոյնիսկ հակոտնեայ ուղղութիւններ, այս
միութիւնը վտանգաւոր է, անէծք մ'իսկ կրնայ
ըլլալ, զի անյարմար ամուսնութիւն մ'է որ կը
կատարուի միացման քօղին տակ:

Որքան որ կրցինք դատել միացման հարցին
շուրջ երկու կողմերու հրատարակած գրութիւն-
ներէն, եւ որքան որ կրցինք եզրակացնել միու-
թեան զանազան ձեռնարկունքներուն հետ մեր ու-
նեցած տեսակցութիւններէն (այս մեծ հարցին
առջեւ մեր խոնարհ կարծիքով) միացման հարցը
դեռ խակ էր եւ պէտք էր աւելի խոհեմութեամբ
մօտենալ անոր:

Ա. Միանա՛նք կ'ըսուի, քանի որ E. R. E. ի եւ
E. R. ի միջև հովուական փոխանակութիւններ կան
արդէն եւ մեր հովիւներէն շատեր ազատօրէն կը
գործեն դրացի դաշտին մէջ:

Այս կէտը սակայն դէպի միութիւն քայլ մը
ըլլալէ աւելի տկարութիւն մը կը թուի ըլլալ:
Եթէ 30 տարի առաջ իրարմէ բաժնուեցան, բա-
ւականաչափ լուրջ շարժառիթներով էր: Մեծա-

մասնութեան մասին խօսելով այսօր յայտնի
կ'երեւի որ դժուարութիւնները չեն վերցած: Եթէ
E. R. E. թույլ տուեր է որ իր հովիւներէն ոմանք
միւս կողմը անցնին, կը նշանակէ որ աշալուրջ
չէ եղեր կամ չէ կրցեր պահել իր պաշտօնեանե-
րը: Եթէ միւսները, երբեմն իր (E. R. E. ի)
դաւանանքը չընդունելով մէկտեղ իրենց եկեր
են, կը նշանակէ որ ղեկավարները անտես ըրած
են իրենց սկզբունքները եւ կամ զանոնք այն-
պէս մը մեկնած են որ սպրդումը կարելի եղած
է: Արդէն շատերու զանգատը այս է այսօր: Ուս-
տի այս վիճակը անպայման միացման պատճառ
մը չէ, յաւէտ հարկ էր հովուական գործունէու-
թեանց վերաքննութիւն մը, արձակելով ոմանք,
եւ ետ կանչելով ուրիշները: Ներկայ պարագա-
ները աւելի բան չեն արդարացներ քան լոկ եղ-
բայրական գործակցութիւն մը:

Բ. Պատերազմի ընթացքին, մեր հովիւ-
ները տեսան թէ որքա՛ն իրարու մօտ էին, ինչո՞ւ
այսօր բաժնուած մնան կ'ըսուի:

Իրաւ է որ այդ արհաւիրքի օրերուն զանա-
զան յարանուանութեանց առաջնորդներ զմայ-
լելի ճիգով մը գործակցեցան հասարակաց վր-
տանգին եւ ցաւին առջեւ: Այն օրերուն, անոնք
ստիպուած էին ձեռք տալ անկրօնին կամ ո՛չ
քրիստոնեային: Բայց արդեօք այս կը բաւէ՞ որ
նոյն բանը շարունակուի խաղաղութեան օրե-
րուն: Կրակի եւ մահալից ճակատին առջեւ կա-
թողիկ կղերը, հրէա ռաբբին եւ բողոքական հո-
վիւր յաճախ միաբանօրէն կրեցին տառապանքի
նոյն բեռը: Այն օրերուն շա՛տ բան մոռցուեցաւ:
Սակայն յետոյ, շոգիացա՞ն պատուարները: Իրենց

վերադարձին այս երեքը հրէա քրիստոնեայ նոր ազա՞նդ մը կազմեցին: Ո՛չ, բայց մեղք չէ՞ որ գէթ բարեկարգեալները չմիանան: Անշնչաւ մեղք է, բայց օգուտը ի՞նչ է միացնելու մարդիկ որոնք նոյն հաւատքը չունին:

«Յիսուս» Քրիստոս կոյս Մարիամէն ծնաւ ու յետոյ մեռելներէն մարմնով յարութիւն առաւ՝ կ'ըսէ մին: «Անկարելի բաներ են ատոնք, որոնց պէտք չէ հաւատք ընծայել» կ'ըսէ միւրը: Առաջինը իբր սրբապիղծ եւ թերահաւատ կ'ընդունի միւրը, եւ իր Փրկչին անարգանք մը կը սեպէ ա՛նոր ազատական «հաւատքը»: Երկրորդը հեղնական ժպիտով մը մտիկ կ'ընէ առաջինին վկայութիւնը՝ զայն մոլեռանդ խաւարամիտի մը տեղ դնելով, կոչելով զայն «տպիտութեան առաքեալ», որուն նեղ միտքը գորկ է գիտութեան լոյսէն:

Ինչո՞ւ միացնել ատոնք: Այսպիսիները միացնել կը նշանակէ նոյն տանը մէջ բերել ու տընկել բաժանման ու վէճի դռն սերմերը:

Կարգ մը շրջանակներ ալ միացման ուժ տընկին խորհելով հարթել երկու կողմերն ալ չարչրկող ֆինանսական անձկութիւնը: Իմ հարցումիս ի պատասխան սակայն E.R.E.ի եւ E. Libreի ալ նախագահները ըսին որ դեռ որոշ չէր որ միացումը պիտի կրնար վերցնել նիւթական տաղնապը, քանի որ տարիներէ ի վեր, երկու կողմերն ալ պիւտճէի կարեւոր բացեր ունեցած են: Բաց աստի ապրումսի կամ հասոյթի խնդիրը մեծ տեղ բռնելու չէ այսպիսի հարցի մը մէջ:

Գ. Ոմանք քաջալերուած են Brigade Missionnaire de la Drômeէն: Յիշեալը, երիտասարդ հովիւներէ կազմուած Աւետարանչական խմբակ մըն է: Նախկին արդիականներ, իրական արթնութենէ մը անցնելէ յետոյ, ետ դարձան իրենց հայրերուն Ս. Գրական հաւատքին եւ շատ օգտակար եղան ֆրանսական եկեղեցիներուն, օրհնաբեր աւետարանչական ժողովներ ընելով շատ տեղերու մէջ, ու ֆրանսացի համայնքները շատ շատ բան կը պարտին անոնց:

Ասոնք քաջալերեցին միացումը: Անշուշտ կը նշմարեն վտանգները, սակայն եռանդով պաշտպանեցին այս ծրագիրը: Ժամանակ մը ինծի անհասկնալի թուեցաւ իրենց ընթացքը: Վերջէն հասկցայ որ կը քաջալերեն յուսալով ի վերջոյ իրենց կողմը շահիլ «այն եղբայրները որ կը յառաջդիմեն»: Անշուշտ ոեւէ կասկածի տակ չէ իրենց զգացումներուն անկեղծութիւնը:

Մեր կարծիքով սակայն վերջերս Brigades իր նախնի հոգեւոր բարձրութեան վրայ չէ: Որոշ առիթներով մկրտութեան եւ եկեղեցւոյ անդա-

մութեան հարցերուն մէջ, անոնք պաշտպանեցին այնպիսի տեսակէաներ, որոնք մեր կարծիքով չէին համապատասխաներ ո՛չ իրենց ունեցած տեսիլքին ո՛չ ալ գործունէութեան: Քիչ մը շատ սիրաշահեցին եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնները, որոնք իրենց կարգին, նոր ասպարէզ, նոր շրջանակ եւ նոր դիրքեր բացին անոնց առջեւ: Brigadesին անդամներէն մին քաշուեցաւ գնաց սակայն: Ու իրենց հոգեւոր վայրէջքը նրկատող հաւատարիմ բարեկամներ մասամբ վերցուցած են իրենց վստահութիւնը եւ կտրած են իրենց օգնութիւնը:

Տակաւին անոնց համբաւը գործեց ի նպաստ միացման: Կարգացի յօգուածը մէկու մը որ կ'ըսէ, «Ասոնք միանալ ուզելէն յետոյ...» հարկաւ այսպիսի պարագաներու միացումը հետեւողութիւն է եւ ոչ անհրաժեշտութիւն:

Կը կարծուի նաեւ որ շատեր ներքուստ չեն հաւանիր միացման, բայց քաջութիւն չունին ազատօրէն արտայայտուելու: Ոմանք ալ խնդրէն ձեռք կը լուան, ձանձրացած անվերջ եւ անպտուղ վէճերէն: Իմ հարցումիս ի պատասխան, «Միացման հարցը Զինական հանելուկի դարձաւ, ես որոշեցի ալ չզբաղիլ անով» կ'ըսէր աւետարանիչ մը:

Իրա՛ւ է, դեռ միացումը լրացած չէ: E. L. էն գրեթէ 50 առ հարիւր հակառակ են: Մեթոտականները, որոնց ջախջախիչ մեծամասնութիւնը հակառակ են, միայն խորհրդակցութեանց մասնակցիլ որոշած են: Սակայն յայտնի է որ գէթ E. R. E. եւ E. R. ի միացումը պիտի կատարուի:

Ժողովուրդին մէջ սակայն գանգատներ կը լսուին: «Փոխան հովիւներով իրարու մէջ համաձայնելու, ինչո՞ւ նախ ժողովուրդին չհարցը՛ւիր թէ միութիւն կ'ուզէ՞ք, ժողովուրդը խնդրէն տեղեակ չէ» կը բողբոքուի: Միութեան ձեռնարկուները յառաջիկայ համագումարներով պիտի ջանան զոհացնել համայնքները:

Չարմանալի է սակայն որ յաղթականներն ալ շատ չեն խանդավառուած: Reimsի համագումարին մէջ իսկ, որոշումէն յետոյ, «մթնոլորտը արտում եւ թախծոտ էր» կ'ըսեն զանազան տեղեկատուներ: Կարծես կ'զգան գործին անկատարութիւնները եւ կ'ազդուին ապագայի հաւանական անպատեհութիւններէն:

Իսկ ընդդիմադիր փոքրամասնութիւնը միշտ հաստատուն կը մնայ, շատեր կը ցաւին այդ կորուստին վրայ եւ իրաւունքով թող միութիւնը ըլլայ, սակայն ի՞նչ պիտի պատահի այդ միաց-

եալ եկեղեցիին, եթէ նա իր մէջէն կը կորսնցնէ լաւագոյն զաւակներէն շատեր: Նոյնիսկ վտանգուած չե՞ն իր շահերն ու պտղաբերութիւնը, եթէ ալ պիտի զրկուի անոնցմէ որոնք ցարդ իրենց կեանքովն ու գործքովը ուրիշներէն աւելի եկեղեցիին լոյսերը եղան:

Ե. Բ. է մարդ դուրս չմնաց: Ծալրայեղ արդիականներն իսկ կը միանան, յուսալով որ օր մը «ներկայ զաւանանքը աւելի պիտի արգիւհականանայ» ինչպէս կը գրեն: Իսկ Ե. Բ. Ե. կը կորսնցնէ իր ընտանիքին արժէքաւոր մէկ մասը: Տուժողը ան է:

Վերջապէս քանի որ պզտիկ կամ մեծ բաժանումներ կը մնան, միացման ծրագիրը լման յաջողած չէ, ու կաթոլիկ կղերին կամ ուրիշներու առարկութիւնները առ այս չեն զաղրիւր ի գօրու ըլլալէ:

Սիրով կ'ընդունինք որ այսօրուան ձեռք բերուած արդիւնքներն իսկ արհամարելի չեն եւ մեր յարգանքին իրաւունք ունին անոնք որոնք այնքան տքնեցան այս դժնդակ խնդրին համար: Տակաւին զուտ հոգեւոր տեսակէտներով միացման յաջողութիւնը մեզի խնդրական կը թուի:

Աչքերնուս առջեւ ունինք այլ միացեալ սեպուած յարանուանութիւններ, ազգային եկեղեցիներ կամ նոյնիսկ միջազգային եկեղեցիներ: Աստուածային տեսակէտէն անոնք կը յաջողին, ու իրենց ունեցած յաջողութիւններն ալ իրենց մէկ ճակատ մը ներկայացնելէն է:

Յիշենք որ անպատճառ մեծագոր եւ լայն կազմակերպութիւններ չեն որ կը գործածուին Աստուծոյ: Աստուծոյ մէթոտը մարդն է: Մա՛րդը փրկուած, սրբուած, լուսաւորուած եւ Սուրբ Հոգիով օծուած Աստուծոյ գործին համար: Այսպիսին Քրիստոսի ծառան է: Այսպիսիներու խումբը Սբ. Հոգիով մկրտուած են մէկ մարմին ըլլալու եւ կը կազմեն Տէր Յիսուս Քրիստոսի եկեղեցին:

Եթէ այսպիսիներու միջեւ արգելք եւ բաց կայ, ոչ մէկ ջանք եւ զոհողութիւն աւելորդ են խոչընդ վերցնելու եւ նմանօրինակ միութիւն մը յաջողցնելու համար:

Ֆրանսական Բարեկարգեալ եկեղեցիներու միացման ձեռնարկը հեռի է աւա՛ղ նոյն հոգիով ընթանալէ եւ նոյն նպատակին հասնելէ: Ահա թէ ինչու շատեր տխրութեամբ կը դիտեն շարժումը եւ ողբալի բան մը կը նկատեն զայն: Յիշաւի դժուար է այսպիսի պարագաներու մէջ շինել «ոսկիով, արծաթով եւ պատուական քարերով»: Աւագէն խուսափելով վէմի վրայ «Անկ-



ԴՈՒԹԵԱՆ

ԲԱՐԵԱՎԱԴ ԴՈՒԹԻՆԸ

(Փիլ. Ա. 9-14)

«Եւ այս աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ աւելի շատնայ գիտութիւնով ու բոլոր ընտրողութիւնով»: Մէկի մը հանդէպ ճշմարտապէս կարօտ զգացող անհատը իր կարօտի առարկային համար կ'աղօթէ: Ուրիշներու հանդէպ մեր ունեցած ամենէն ընտիր բաղձանքները բնագոյրէն աղօթքի կը վերածուին: Արդարեւ մեր կարօտներուն որակը կրնանք փորձի ենթարկել Շնորհաց զահին առջեւ մեր անոնց համար կատարած խնդրուածքներուն բնոյթովը: Կարօտը միմիայն խեղճուկ, երկրաւոր զգացում մը կը մնայ՝ եթէ անիկա արծիւի թեւերով դէպի վեր բարձրանալով մինչեւ երկնից դուռը չհասնի: Պօղոսի՝ Փիլիպպեցւոց հանդէպ տաժած կարօտը երկինքի գանձատուններէն՝ անցնելով ամենաճախ առատութիւնը կը խնդրէ անոնց համար:

«Այս աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ աւելի շատնայ գիտութիւնով»: Քանզի սէրը կրնայ մութ, կամ մասամբ լուսաւորուած ըլլալ: Սէր մը կայ որ աղօտ է, չկրնար պայծառ տեսնել: Սէր կայ որ նման է մոմի լոյսի, սէր կայ որ կը նմանի աստղերու, բայց կայ նաեւ սէր որ կէս օրուան արեւին պայծառութեամբը

եան պատուական վէմին» վրայ շինելն ալ մեծ յաջողութիւն է: Զգարմանանք: «Եթէ Տէրը չը շինէ տունը, զուր տեղը կ'աշխատին շինողները»:

Սրտերու եւ գործերու վերջնական լուծումն ու դատաստանը Տէրոջը միայն կը պատկանին: Ու այս հարցին մէջ ինչ որ «առանց իրեն» եղած է, ի վերջոյ, ջուրին տրուած սուրի հարուածի մը կրնայ նմանիլ:

(Վերջ)

Զ. Բ. Պ.

Փարիզ

կը փայլի: Կայ սէր մը որ բիրտ ու անտաշ է եւ ամէն փափկանկատութենէ զուրկ: Այսպէս է տարրական սէրը: Յառաջացած սէրը աւելի փափկանկատ, աւելի զգայնիկ ու աւելի մտացի է: Ազաքեալը կ'աղօթէ որ իր ընթերցողները սիրոյ ճեմարանին այս բարձրագոյն կարգերուն առաջնորդուին, որ աւելի ու աւելի հասնին Աստուծոյ լուսարար զիտութեան եւ իրարու պիտոյքներուն հաղորդակցութեան: Եւ այս ամէնը՝ որպէսզի կարենան «տարբեր (կամ գերազանց) բաները զանազանել:

Ներկային «աղէկը» միայն գնահատելու չափ կարողութիւն ունէին, անկարող էին «լաւագոյնը» եւ «ամենէն լաւը» գնահատելու: Սակայն առաքեալը կ'աղօթէ որ այնքան յառաջ երթան որ կարենան «գերազանցը» ճաշակել ու զգալ ա որ քաղցրախորժ համը: Կեանքի էութիւնն ու անուշութիւնը կը կայանայ սիրոյ յայտնութեան մէջ. եւ որչափ նորր բլլայ սէրը, այնքան ճոխ կ'ըլլայ անոր յայտնութիւնը: Երբ գերազանց սիրով համակուինք, ամէն կողմ կ'երևնայ անոր ընտիր արտայայտութիւնը:

«Որպէսզի մինչեւ Քրիստոսի օրը անկեղծ եւ առանց գայթակղութեան ըլլաք»: Երբ մարդ այսպիսի յառաջացած սիրով մը կը սիրէ ու կ'սկսի նոր նոր ակնարկներ նետել Աստուծոյ փառքին վրայ՝ անոր նկարագիրը կը ճոխանայ աստիճանաբար ու հետզհետէ աւելի անկեղծ կ'ըլլայ: Ի՛նչ վսեմ զաղափարական: «Անկեղծ» բառը տառապէս կը թելադրէ այնքան լման ու խորունկ կատարելութիւն մը որ արեգակին պայծառ լոյսին քննութեան ենթարկուելով իսկ անրիժ ու անարատ կ'երևնայ: Մաշած հագուստներ կրնան քննութենէ անցնիլ ձմրան աղօտ լոյսին տակ, սակայն ամբան պայծառ արեգակին տակ երեւան կուգան անոնց պակասները: Նոյնպէս ալ երկրաւոր սկզբունքներով ու չափերով դատելով՝ մեր նկարագիրները կրնան յարգելի երեւնալ, սակայն բոլորովին տարբեր երեւոյթ կ'առնեն՝ երբ Աստուծոյ դէմքին բոցավառ լոյսին առջեւ գտնուին: Սակայն ճիշդ այդ ծանրակշիռ ու խիստ քննութեան նպաստաւոր վճիռին է որ վերջապէս պիտի հասնինք մեր մէջ կատարելագործուած սիրոյն միջոցով: Քրիստոսի օրը՝ Այդարութեան Արեգակէն չափուելով՝ անկեղծ ու առանց գայթակղութեան եւ առանց ներքին թերութեան պիտի գտնուինք Յիսուս Քրիստոսի շնորհքով՝ լեցուած արդարութեան պտուղներով՝ Աստուծոյ փառքին ու զոփութեանը համար: Երբ

մեր սէրը առատանայ ու Փրկչին շնորհքով վառի ու տաքնայ՝ մեր ամբողջ էութիւնը կ'երպարանափոխուի ու վերջապէս օր մը «Անոր նը՝ յանութիւնովը» կ'արթննանք:

«Կ'ուզեմ որ զիտաք, եղբայրներ, թէ ինչ որ ինծի պատահեցաւ, ալ աւելի Աւետարանին յառաջդիմութեանը պատճառ եղաւ»: Ինչ որ վտանգ կը թուէր, օրհնութիւն եղաւ: Արգելքը աւելի մեծ ազատութիւն ծնաւ: Բանտը որոշուած էր աւելի ճոխ ու փառաւոր տեսիլքներ ներկայացնելու առաքեալին Առջեւ: Անոր այս փորձառութիւնները որչափ յաճախ կ'ընդունուէին Տէրւոյ սուրբերուն կեանքերուն մէջ: Երբեմն այնպէս թուած է թէ ազատներ ու թշնամիներ իրենց գործունէութեանց դադար ու աւերում պատճառած են: սակայն յաջորդ օրը յայտնի եղած է թէ իրենց սպառնացող թշնամիները առատածնուն բարեկամներու վերածուած են: Երբեմն սիրելիներ կորսնցուցած ենք, եւ ասիկա կործանիչ ու անգութ թուած է մեզի, բայց եւ այնպէս վերջը տեսած ենք թէ Աստուած շնորհալի նպատակով մը դպչած էր մեզի: Օր մը երկաթուղիի մը զիծին մօտէն կ'անցնէի ուր հրդեհ մը ծագելով ամէն կանանչութիւն հրոյ ճարակ դարձուց, մինչեւ որ ստուար տարածութեան մը վրայ խոտի նշուղն անգամ չէր երեւնար, այլ սեւ ու տխուր տեսարան մը: Քանի մը շաբաթ վերջը միեւնոյն տեղէն անցաւ եւ ահա այրած ու սեւցած ամալութեան փոխարէն ամենապարտիչ ու թարմ կանանչութիւնը կ'երեւնար: Հրդեհին ամենէն սատկօրէն լափած մասերը ամենէն յանկուցիչն էին: Այն տեղին «հանդիպած բաները» աւելի բուսականութեան յառաջդիմութեան պատճառ եղած էին: «Աստուած սէր է», ուրեմն «Մաշող կրակ է»:

«Մ'ինչեւ իմ կապերս, որոնք Քրիստոսի համար են, բոլոր պալատին մէջ եւ ուրիշ ամենուն ալ յայտնի եղան»: Մ'ինչեւ որ մարդ մը փութորիկով չփորձուի, անոր հիմին զօրութիւնը յայտնի չըլլար: Նաեւ մը ոյժը ոչ թէ հանգաբար ալ մարկածովի ծովու վրայ կը փորձուի: Երբ մէկը նեղ աչկիւն մը կը հասնի եւ մեղքէ կամ յուսահատութենէ ազատելու ունէ ճամբայ չտեսներ, ահա այն ատեն յայտնի կ'ընէ անոր կրօնքին իրական արժէքը: Երբ առաքեալին կը նայինք, կը տեսնենք թէ այն դժբաղդութիւնը, որմէ նախապէս վախցած էր, Աստուծոյ թագաւորութեան ծառայող միջոց մը եղած էր: Անոր շուրջը զոհողները տեսան թէ իրեն կապերը

«Քրիստոսի համար» էին: Անոր շղթաներն իսկ սկսան քարոզել թէ ի՞նչ փառաւոր կապերով աւնիկա Տէրոջը կապուած էր: Անոր պահապան զինուորները սկսան փսփսալ իրենց բանտարկեալին մասին: Կատարելապէս յայտնի էր թէ Առաքեալը հասարակ մէկը չէր: Յայտնի էր թէ անիկա զօրութեան ու քաջութեան գաղտնի զարմանալի աղբիւրներ ունէր, որոնք իրեն չէին թուլատրեր ուժաթափութեան նշոյլն իսկ ցուցնել այն խիստ ճշնաժամային ու վտանգաւոր օրերուն: Ասոնք յայտնութիւններ են որ փառք ու պատիւ կը բերեն Տէրոջը: Երբ յանկարծ կեանքի մութ ու մրրկալի պարագաներուն կը մատնուինք ու մարդիկ մեր անտաքնապ անդորրութիւնը նկատելով գրեթէ կը մոռնան մեր տաքնապը ու կը հարցնեն թէ «Ի՞նչ զօրութեամբ» կարող ենք այդպէս արտայայտուիլ, այն ատեն «Քրիստոսով մեր կապերը» կը յայտնուին ու Տէրը կը փառաւորուի:

«Եւ Տէրոջմով եղբայրներուն շատերը սիրտ առին իմ կապերէս՝ ալ աւելի համարձակիլ Աստուծոյ խօսքը խօսելու առանց վախի»: Երեւութական դժբաղդութիւնը ճոխ բախտաւորութեան կը վերածուի: Առաքեալին անդրդուելիօրէն Քրիստոսի կապուած ըլլալուն յայտնութիւնը ուրիշներու ալ քաջութիւն կուտայ: Երկչոտները Պօղոսի փառաւոր արիւթիւնը դիտելով սուրբ զօրութեամբ կը տոգորուին: Անոր անձկութեան պտուղները հոգեւորապէս կ'ոգեւորեն իր եղբայրները: Մեր Տէրոջը երեւութական խստութեան շնորհալի գաղտնիքներէն մէկն ալ այս է:

Ո՞վ կրնար գուշակել թէ Հռովմի աշակերտներուն ոգեւորման միջոցը իրենց ամենամեծ առաջնորդին բանտարկութիւնը պիտի ըլլար: Այսպէս մեզի կարելի չէ երբեք գիտնալ թէ ի՞նչ քաղցրութիւն պիտի բղխէ մեզի վիճակուած դառնութենէն, ու ի՞նչ ազատութիւն պիտի ծագի մեր գերութենէն: Տէրը ամենէն վեր է: Անիկա կը խորհի իրեններուն վրայ. երբեք չը մոռնար իր գաւակները: Անապատներէ՝ պարտէզներ յառաջ բերելով կը հաճոյանայ եւ ամայի տեղերը վարդի նման ծաղկեցնելով կը հրճուի:

Թարգ Ն. Մ.

ԱՍԻԱՅԻ ԵԹԹՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

օօօ

4.— ԹԻԻԱՏԻՐ

(Յ. Տ. 600-1530 խաւարի շրջան)

Պերգամոնի մօտ քաղաք մըն էր Թիւատիր: Ներկայիս աւերակ, որուն մօտը կը գտնուի Ագ-Հիսար Թրքաքնակ փոքր քաղաքը: Հին բնակիչներն էին Մակեդոնացի գաղթականներ, որոնք ընդհանրապէս կ'զբաղէին հիւսուածեղէնով եւ ներկարարութեամբ. երեւելի էր իրենց ծիրանագոյն կերպասը: Այս քաղաքէն էր Լիդիա քոյրը եւ հաւանական է որ այս ընտանիքը օրհնութիւն եւ միջոց եղաւ քրիստոնէութեան տարածուելուն ի Թիւատիր Գործ. ԺԶ. 14-15:

Թիւատիր կը նշանակէ «Կնոջ տիրապետութիւնը» կամ «բռնութիւնը»:

Տէր Յիսուս կը յայտնուի այս եկեղեցիին «կրակի բոցի պէս աչքերով եւ ոսկեպղնձի նման ոտքերով՝ որպէս երիկամունքը քննող, սրտին խորհուրդները գիտցող (հ. 23), մանաւանդ նախանձաւորութեան բարկութեամբ նայող Տէրը, որուն ընթացքը սուրբ է և որուն ոտքերուն տակ պիտի փշրուին ամբարիշտները հ. 27:

Տէրը կը գովէ այս եկեղեցիին իր գործերուն, իր սիրոյն, իր ծառայութեանը, հաւատքին եւ համբերութեանը համար, մանաւանդ իր վերջին գործերը առաջիններէն շատ են:

Թիւատիր, եկեղեցական պատմութեան մէջ կը ցուցնէ Հռովմէական շրջանը, երբ Գրիգոր Մեծն հաստատեց կաթոլիկ ծէսն ու արարողութիւնը (Յ. Տ. 390-604), որմէ վերջը Պապական աթոռին իրաւասութիւնը երթալով դօրացաւ եւ հաստատուեցաւ ու տիրական դարձաւ ամէն տեղ, որմէ ներշնչուեցան միւս եկեղեցիները:

Տէրոջը այս եկեղեցիին դէմ ըսածը այս է որ թող տուած է Յեզարէլ կիւն որ ինքզինք մարգարէութեան անուանէ ու Աստուծոյ ծառաները մոլորեցնելով պոռնկութիւն ընել տայ եւ կուռքերու դոհուածէն կերցնէ հ. 20:

Հռովմէական աթոռին զարգացումով սկսան կռապաշտական սովորութիւններ, պատկերապաշտութիւն, արձաններու եւ կարգ մը առարկաներու պաշտամունքը, մարդկային ծէսեր և Աւետարանի սրբութեան հակառակ պաշտամունք: Սատանան լուսաւոր հրեշտակի կերպարանքով որսաց շատ մը անկեղծ Տէրոջը ծառաները:

Ո՞վ էր Յեզարէլ:



Յեզարէլ Իսրայէլի թագաւորին հեթանոս թագուհին էր, Գ. թագ. ժ. 29-33, որուն օրերը անձրեւը դադրեցաւ ու սաստիկ սով եղաւ, Գ. թագ. ժ. 1-2:

Իրապէս 1000 տարուայ խաւարի շրջան մըն էր պապական տիրապետութեան շրջանը: Աստուծոյ խօսքը գոցուած, հոգիներ չորցած, ճշմարտութեան սովը պատեց ամբողջ քրիստոնէի աշխարհը եւ մահը կը տիրապետէր: Մի քանի վանքերու մէջ միայն բանտարկուած էր Աստուծոյ խօսքը:

Յեզարէլ մարգարէները սպաննեց եւ անիրաւութեամբ տիրեց ու ժառանգեց Գ. թագ. ժ. 4:

Այս շրջանին Տէրոջը խօսքը ունեցող եւ վերակայող սուրբեր հալածուեցան ու ջարդուեցան պապական իշխանութեան հրամանովը եւ կարգադրութեամբ: Ոմանք այրուեցան, բանտարկուեցան, ոմանց ոսկորները ջախջախուեցան, ուրիշներ սոսկալի տանջանքներու ենթարկուեցան ճշմարտութիւնը վկայած ըլլալուն համար:

Եւրոպայի զանազան կողմերը ի մասնաւորի Սպանիա կը գործէին հաւատաքնութեան ատեաններ, որոնք հազարաւոր սուրբեր անտանելի տանջանքներու ենթարկեցին եւ անլուր չարչարանքներով նահատակեցին եկեղեցիին (Յեզարէլի) հնազանդեցնելու պատրուակով հ. 20:

Հոսմէական կազմակերպութեան պետը (պապը) ինքզինք այնքան բարձրացուց որ եկեղեցին զայն անսխալական դաւանելով անոր որոշումը եւ կոնդակները ընդունուեցան որպէս Տէրոջը պատգամը եւ վեր դասուեցան Աստուածաշունչէն. զոցուեցան աւետարանիչներու եւ ճշմարիտ մարգարէներու բերանները եւ շատցան Յեզարէլի պաշտօնեաները (քահանաներ), որոնք օտարամուտ եւ կոռուպտական սովորութիւններու, ծեսերու եւ Ս. Գրոց հակառակ պատարագներու եւ զոհերու առաջնորդեցին Աստուծոյ ժողովուրդը: Ինչպէս Իսրայէլացի Աբաբա եւ Բեթանուս Յեզարէլ միացեր էին, այնպէս Բիէական սովորութիւններ միացած Բեթանուս պաշտամունքին, կազմեցին այդ շրջանի եկեղեցիին նկարագիրը:

Յեզարէլ անբարոյ կին մըն էր, Գ. թագ. ժ. 30: Հոսմէական կազմակերպութեան պետերն ալ աշխարհի թագաւորներուն հետ խառնակեցան ու քաղաքական աշխարհի մէջ իրենց զարմանալի մեքենայութիւններով եւ խորամանկութիւնով իշխաններ ու թագաւորներ նկուն ըրին: Ասոնք բարոյական եւ քաղաքական պատմութեան մէջ եկեղեցիի անուան անվայել, անշնչելի գէշ ա-

նուն մը թողուցին եւ ի վերջոյ բարեկարգիչներու ձեռքով եւ Աստուծոյ խօսքովը վերաւորուած ինկան իրենց ղերքէն հ. 22:

Ինչպէս Եղիայի օրով եօթը հազար մարդ պահուած էին Տէրոջմով, որոնք Բահաղի ծունկ չկրկնեցին եւ զանկա բերնով չպագին Գ. թագ. ժ. 18, այնպէս ալ թիւատիրի մէջ կան անկեղծ Տէր Յիսուս Քրիստոսը սիրող շատ մը սուրբեր, որոնք ամէն գոհողութիւն եւ նեղութիւն յանձն առնելով, իրենց ընդունած լոյսին համեմատ սուրբ կեանք կ'ապրին, որոնք Սատանայի խորունկ բաները ճանչցած չեն, այսինքն անոր լարած թակարդը — ծէս եւ արարողութիւններ եւ արտաքին բաներ որոնցմով նա կ'ուզէ որսալ ընտրեալ հոգին, զրկելով զանոնք իրենց Քրիստոս Տէրոջմէն կող. Բ. 18-23 եւ ոչ Ս. Գրային ուսուցումներով հեռացնել պատգամին լոյսէն Գաղ. Ա. 7: Տէրը այդ սուրբերուն վրայ ուրիշ ծանրութիւն չդնէր, հապա միայն իրենց ունեցածը պահել մինչեւ Ինք պայ, որով կը ցուցնէ թէ այս շրջանէն հաւատարեալներ պիտի դուրսուին Տէրոջը զալստեան ատենը, որոնց Տէրը միայն մէկ պատուէր կուտայ որ Իր գործերը պահեն հ. 26, այսինքն Իր սուրբ Անուան հաւատքը պահեն Յովհ. 2. 29:

Այս օրերս սկսած է կաթոլիկ եկեղեցիին մէջ ալ Տէր Յիսուսի զալստեան սպասող եւ այս փառաւոր յոյսի մասին զրոյց եւ խօսող հաւատացեալներ երեւան գալ:

Տէր Յիսուս հաւատարիմներուն կը խոստանայ Իր օրհնեալ իշխանութիւնը եւ Առաւօտեան Առողջ. խաւար շրջանին Իր զալստեան փառաւոր յոյսը, ինքզինքը: Ա. Պետ. Ա. 19, Յայտ. ԻԲ. 16, Ա. Յովհ. Գ. 2: Այն ատեն հաւատարիմ մնացող սուրբեր Տէր Յիսուսի հետ միացած պիտի իշխեն եւ թագաւորեն ազգերուն վրայ Մատթ. ժ. 28, Ղուկ. ԻԲ. 29, 30, Սաղ. Բ. 8, 9, Դան. Է. 22, Յայտ. ժ. 5, ժ. 14, 15:

Մեծ դժուարութիւններու, Սատանայի սարսափելի խորամանկութեանց եւ թակարդներու մէջէն Տէրը Իր ընտրեալները ազատած ու պահած է եւ այսօր ալ կը պահէ ու պիտի պահէ մինչեւ որ Ինք փառքով յայտնուի եւ ղիւք սիրողներ ու Իր անուանը յուսացողներ Իրմով խոստացեալ փառքին հասնին:

Յաղթողին, այո յաղթողին,
Սըրտին մէջ լոյս արուսեակ,
Օղին մէջ ալ պայծառ աստղ,
Պիտի տամ եւ իշխանութիւն
Ազգերուն վրայ տիրել:



ԱՂԻՏԱԲԵՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Վասն զի մենք երեւցած բաներուն չենք նայիր, հապա չերեւցածներուն, քանզի երեւցած բաները ժամանակուոր են, իսկ չերեւցածները՝ յաւիտեանական:

Բ. Կոր. Դ. 18

Կը պատմութի թէ, քաղաքի մը մէջ Աւետարանիչ մը արթնութեան ժողովներ սկսաւ ընել: Տեղացի հաւատացեալներուն թափած ջանքերուն շնորհիւ, ամէն իրիկուն մեծ բազմութիւն կը հաւաքուէր: Արթնութեան Հոգին սաստկաշունչ հովի պէս սկսաւ փչել: Բազմութիւն անապաշխար եւ յետադարձ հոգիներ Աստուծոյ դարձան: Այլեւայլ մեղքերով բեռնաւորուած եւ հոգեւորապէս անդամաւորուած հաւատացեալներ ալ դառնուցան, որոնք զգաստացած՝ զաղջութենէ դուրս ելան եւ իրենց ուխտերը վերանորոգեցին: Բայց ցաւալիօրէն, եղան մեղաւորներ ալ, որոնք իրենց մեղքերէն եւ սնտի պատճառաբանութիւններէն հրաժարիլ չուզէին, մերժեցին իրենց ձեռքերը Աստուծոյ փրկարար ձեռքին մէջ դնել: Այսպէս, իրենց յիմարութեանը պատճառաւ կրօնացուցին այն մեծ փրկութիւնը եւ յաւիտեանական օրհնութիւնը՝ զոր Աստուծոյ կ'ուզէր տալ անոնց, Իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի ձեռքով: Այս վերջիններուն ողբալի անմտութիւնը ճշգրտօրէն պատկերացնող պատիկ դէպք մը պատահեցաւ այդ նոյն օրերուն եւ ահաւասիկ:

Կին մը, որ այդ ժողովներու ընթացքին Փրկչին յանձնուած եւ մեծ օրհնութիւններ վայելած էր, խորհեցաւ իր 7-8 տարեկան անառակ տղան պաշտօնեային ներկայացնել եւ աղօթք խնդրել անկէ: Իրիկուն մը, մինչ ժողովուրդը կ'արձակուէր, կինը գաւակին հետ քարոզիչին մօտենալով ըսաւ, «Որքա՛ն ուրախ պիտի ըլլայի եթէ հաճէիք որդւոյս զլիւսն վրայ ձեռք դնել եւ աղօթել»:

— Ամենայն սիրով, պատասխանեց պաշտօնեան, եւ պատիկին դառնալով հարցուց, «Դուն Յիսուս Փրկիչը կը սիրե՞ս, գաւակս»:

— Այո, պատասխանեց տղեկը:

— Եւ Ասոր անունովը կ'ուզե՞ս օրհնուիլ, գաւակս, աւելցուց պաշտօնեան:

Պատիկը զլիսովը դրական նշան ըրաւ թէ կ'ուզէր: Ասոր վրայ Աւետարանիչը պատիկին աջ

ձեռքը խնդրեց, բայց տղան իր ձախ ձեռքը երկարեց. մինչդեռ աջը որ սեղմ գոց էր, կոնակին հետեւ պահել ուզեց:

— Բայց ես քու աջ ձեռքդ խնդրեցի, ըսաւ Աստուծոյ ծառան:

Պատիկը չուզեց հնազանդիլ՝ միշտ իր աջ ձեռքը հետեւ պահելով: Այն ատեն պաշտօնեան աջապէս ցուցուց սրպէս թէ կ'ուզէր մեկնիլ: Բայց մայրը զայն արգիլելով աղաղակեց, «Ո՛չ, ո՛չ, սիրելի քարոզիչ, գաւակս կ'ուզէ օրհնուիլ եւ պատրաստ է հնազանդելու»:

— Այդպէ՞ս է, պատասխանեց պաշտօնեան քաղցր ժպտով մը, պիտի օրհնեմ զայն, եթէ հնազանդի:

Բայց պատիկը դեռ կը յամառէր: Այդ պարագային մայրը մեծ տրտմութեամբ քաշեց պատիկին աջ ձեռքը եւ դրաւ Աւետարանիչին ձեռքին մէջ: Տղուն ձեռքը դեռ սեղմօրէն գոցուած էր:

Ա՛, վերջապէս, պատասխանեց Աստուծոյ ծառան, ձեռքը պատիկին զլիսուն վրայ դնելով, հիմա ձեռքդ լման բաց ձեռքիս մէջ, որպէսզի քեզի համար աղօթեմ:

Պատիկը չուզեց հնազանդիլ: Ու մինչ տղան կը յամառէր, մայրը իր ուժերը հաւաքեց եւ բռնութեամբ բացաւ գաւակին գոց ձեռքը: Ա՛հ, ի՞նչ տեսնուի աղէկ. պատիկին մատներուն արանքէն երեք քարէ գնդակներ ինկան քարոզիչին ձեռքին մէջ: Երեք քարի կտորնի՛ր...:

Պատիկը զլուխը կախեց: Աւետարանիչը ծռելով դէպի զայն, քնքշութեամբ շարունակեց, «Զաւակս, երեք ջնջին քարերու պատճառաւ կ'ուզէիր Յիսուս Փրկչին օրհնութիւնը կրօնացնել»:

Տղան փղձկեցաւ ու սկսաւ լալ: Եւ մինչ արցունքի կայլակներ կը զլորէին պատիկ ըմբոստին այտերէն վար՝ Աստուծոյ ծառան աղօթեց խորունկ յուզումով, Տէր Յիսուսի օրհնութիւնը խնդրելով որդւոյն եւ մօրը վրայ:

Ահա ամէնը. — երեք քարէ գնդակնի՛ր... անարժէք խիճեր, որոնք սակայն պատիկ տղուն անբաղդատելիօրէն օրհնութիւններէ զրկուելուն պատճառ կրնային ըլլալ:

Ու հիմա մինչ մենք արթնութեան ժողովներուն ընթացքին, իրենց ձեռքերը Աստուծոյ փրկարար ձեռքին մէջ դնելու յօժարութիւնը չունեցող մեղաւորները այս անգիտակից մանուկին հետ կը բաղդատենք, ի՞նչ ամէն մէկ ընթերցող ալ ինքզինքը ամենալուրջ անձնաբերութեան ենթարկէ:

Նայեցէ՛ք: Մանուկը անգիտակցօրէն աղօթքէ մը բղխող օրհնութիւնները կը մերժէր իր քա-

ըէ զնդակներէն չգրկուելու համար: Մինչդեռ անդին, հասկնալու, տրամաբանելու եւ ընտրելու կարողութեան տէր անձեր, գիտակցօրէն կը մերժեն ինչ որ արժէքաւոր եւ օգտակար է իրենց, ինչ որ սուրբ է, օրհնեալ եւ յաւիտենական, փոխան այսպիսի բաներով՝ որոնք ծուխի պէս վազանցուկ, ունայնութեան պէս անարժէք եւ թոյնի պէս աղիտաբեր են: Ի՞նչ նմանութիւն... Ի՞նչ մահացու յիմարութիւն... Այսպէս գիտակցօրէն արհամարհեցին զիրենք յանդիմանող Ս. Հոգին եւ անոր հետ զղումն ու ապաշխարութիւնը: Անարգեցին ողորմութեանց Աստուածը եւ իր սիրազեղ հրաւերն ու խաղաղութիւնը: Մերժեցին Տէր Յիսուսը եւ Անոր հետ ճշմարտութիւնն ու կեանքը: Մերժեցին մեծ փրկութիւնը, հետեւաբար երկիրքը իր անսահման ճոխութեամբ, յաւիտենական երանութիւնը իր անանցանելի փառքով եւ աստուածային բոլոր օրհնութիւններով:

Զէին՝ զիտեր արդեօք թէ ինչ որ ցանեն, նոյնը պիտի հնձեն: Զէին՝ զիտեր թէ այդ կարգի յիմարութեան մը հետեւանքները ծանրակշիռ եւ անխուսափելի են միշտ: Թէ իրենց մեղքերը զիրենք պիտի գտնէ անպայման եւ իրենց պըղծութիւններովը լեցուած դաւաթը իրենք պիտի խմեն վերջապէս: Թէ անգեղձ վիճակ մը՝ ներքին տաքնապներն ու խղճահարութիւնները բազմապատկելու կը նպաստէ միայն: Թէ Աստուծոյ բարկութիւնը եւ անէծքի ահարկու դատապարտութիւնը իրենց վրայ օրըստօրէ աւելի կը ծանրանայ: Եւ թէ ի վերջոյ՝ իրենց բաժինը պիտի ըլլայ կրակով ու ծծումբով վառած լիճը, որուն տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից: Ըսի թէ գիտակցօրէն ըրին իրենց այս ընտրութիւնը: Ահա թէ ինչու Առաքեալը կ'աղաղակէ, «Այս է դատապարտութիւնը որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին»:

Ի՞նչ բան զիրենք մղեց այս կործանարար յիմարութեանը: Պարզ է: Մանուկը օրհնուելէ արգիլողը երեք քարէ զնդակներ էին: Ասոնք ալ յաւիտենական անկշիռ արժէքներէ զրկողը իրենց նախընտրած տեսանելի եւ ժամանակաւոր ունայնութիւններն էին: Այսպէս Եսաւ իր անդրանկութեան իրաւունքը դգալ մը ապուրի հետ փոխեց: Յաւիտենական կեանք փոխող հարուստ պատանին խոժոռելով արտամած հեռացաւ փրկութեան դռնէն, վասնզի իր ստացուածքէն չուզեց հրաժարիլ: Դէեզի բորբոսութեան անէծքով զարնուեցաւ «ոսկի հորթին», ըսել կ'ուզեմ զրա-

մի պաշտամունքին իր սիրտը կապելուն համար: Դեմաս աշխարհաբոլորութեան պատճառաւ կեանքի ճամբան անարգեց: Պիղատոս՝ Կայսրին բարեկամութենէն, Հերովդէս փառասիրութենէն եւ Փարաւոն իր կամակորութենէն չհրաժարուելուն պատճառաւ կործանեցան: Աքաաբ իր կնոջ, Հերովդէսի աղջիկը իր մօրը եւ Բաղասամ իր սըրտին թելադրանքներուն աւելի անսացին քան Աստուծոյ փրկարար ձայնին եւ կորսուեցան:

Այսպէս ամէն անապաշխար իր կարգին, զինք զրաւող արգելքներ եւ պատճառարանութիւններ ունի: Ընդհանրապէս խոչընդոտները հետեւեալներն են. — հայրն ու մայրը, կինը կամ ամուսինը, զիրքն ու պատիւը, միջավայրը կամ գրծը, բարեկամաց ծաղրանքը կամ հակառակորդաց թշնամանքը, մարմնոյ ցանկութիւնը եւ աշխարհային զուարճութիւնները, ազգային խնդիրներն ու կոստակցական համոզումները, եկեղեցական աւանդութիւններն ու կրօնական աւելորդապաշտութիւնները: Ու դեռ եթէ կ'ուզէք աւելցուցէք ասոնց վրայ ինչ որ կը յիշէք կամ կրնաք երեւակայել: Ապա բաղդատեցէք այս բոլորին համագումարը՝ անմահ հոգիի մը արժէքին, Քրիստոսի մահուամբը ձեռք բերուած մեծ փրկութեանը եւ Աստուծոյ ողորմութիւնովը մեզի տրուելիք յաւիտենական օրհնութիւններուն հետ: Ու ըսէք հիմա, այս բոլորը քարէ երեք զնդակներէն աւելի անարժէք, երազէն աւելի անոտի եւ ունայնութենէն աւելի թեթեւ չեն: Ահ, հիմա կը հասկնամ թէ աշխարհի Փրկիչը՝ ինչո՞ւ այսքան լուրջ շեշտով ազդարարեց զինք չըջապատողները թէ, «Ան որ այս բաները ինծմէ աւելի կը սիրէ, Ինծի արժանի չէ»: Եւ դարձեալ, «Ի՞նչ կը շահի մարդ մը եթէ ամբողջ աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ»:

Արդ, «Զգուշացէք, չըլլայ որ ձեզմէ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ... չըլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ կամ անսուրբ՝ Եսաւի պէս որ կերակուրի մը համար անդրանկութիւնը ծախեց»:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

.....

Դարձիւր, ով ապստամբ Իսրայէլ, կ'ըսէ Տէրը, Իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր, քանզի զի Ես ողորմած եմ, կ'ըսէ Տէրը, յաւիտեան ոխ չեմ պահեր: Միայն թէ քու անօրէնութիւնդ ճանչցիր, որ քու Տէր Աստուծմէդ ապստամբեցար... Իմ խօսքիս հնազանդութիւն չըրիք, կ'ըսէ Տէրը: Դարձէ՛ք, ով ապստամբ որդիք, կ'ըսէ Տէրը:

Երեմ. Գ. 12-14



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՆՈՅ. 1.— ՕՐԷՆՔ, ՍԷՐ ԵՒ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ
Դաւ չոռվ. ԺԳ. 1-14: Կարդալ ԺԳ. 13-21:

Շատ փափուկ բայց եւ այնպէս եկեղեցիին
կողմէ շատ անտեսուած նիւթերու վրայօք կը
խօսի մեր դասը. այն է «Քրիստոնեան եւ քա-
ղաքական կառավարութիւնը»: Եթէ մենք Աս-
տուծոյ խօսքէն յատկօրէն եւ ազօթքով սեր-
տենք եկեղեցիին կոչումը, դիրքը, յարաբերու-
թիւնները, ապազան եւ յոյժ՝ պիտի հասկնանք
թէ ան ինչ կը սորվեցնէ մեզ հաւատացեալին
քաղաքական իշխանութեանց հետ ունենալիք
յարաբերութեան վրայօք:

1. Տէր Յիսուս ըսաւ, «Ես աշխարհէ չեմ»
(Յովհ. ԺԷ. 14, 16) եւ այսպէս նա աշխարհային
իշխանութեանց չխառնուեցաւ, անոնց դէմ չբո-
ղոքեց, հակառակ որ նա ապրեցաւ իր ազգին
մէջ եւ օտար լուծի տակ: Նա չբողոքեց երբ գա-
զան Հերովդէսը Յովհաննէս Մկրտիչին զլուխը
կտրել տուաւ (Մատթ. ԺԳ. 10-13), կամ երբ Պի-
ղատոս Գալիլիացւոց արիւնը իրենց զոհերուն
հետ խառնեց (Ղուկ. ԺԳ. 1-3), կամ երբ Իրմէ
անարդար կերպով տուրք պահանջուեցաւ (Մատ-
թ. 24-27): Եւ երբ իր թշնամիները ուզեցին քա-
ղաքական թակարդ լարել իրեն, նա իմաստուն
պատասխանով մը զանոնք պապանձեցուց, այս-
պէսով տալով նաեւ բոլոր գալիք դարերու իր
հետեւորդներուն՝ անոնց դիրքի եւ կեանքի կա-
նոնադիրը հանդէպ կառավարութեանց, «Չայն որ
կայսրինն է՝ կայսրին տուէք, զայն որ Աստու-
ծոյնն է՝ Աստուծոյ» Մատթ. ԻԲ. 15-22):

2. Ներկայ աշխարհային դրութեան իշխանը
Սատանան է, ըլլայ քաղաքական տեսակէտով—
Յովհ. ԺԲ. 31, ԺԳ. 30, ԺԶ. 11, Եփես. Բ. 3, Զ. 12,
Ա. Յովհ. Ե. 18, ըլլայ կրօնական տեսակէտով—
Բ. Կոր. Դ. 4: Աշխարհը կառավարող մեծ կառա-
վարութեանց զինանշանները զօրաւոր, արագ եւ
զիշատիչ գազաններ են (Դան. Է. 4-7, Յայտ. ԺԳ.
1-3): Այժմ Անգլիոյ նշանն է առիւծը եւ Միաց-
եալ Նահանգներունը արծիւը:

Ներկայիս աշխարհ կը կառավարուի Ա. Յովհ.
Բ. 16ի երեք բաներով: Ու թէ եւ արդիականներուն
հաճելի չէ լսել զայս՝ բայց Ս. Գիրքը կ'ըսէ թէ

այս սատանայական եւ մեղսալից քաղաքակա-
նութիւնն ու քաղաքակրթութիւնը դատապար-
տուած են աննախընթաց անգելի կործանման
մը: Դան. Բ. 44, Յովել Գ. 2աք. ԺԳ. Յայ. ԺԺ. 11-19:

3. Ի՞նչ է հաւատացեալին դիրքը այս աշխար-
հին եւ անոր կառավարութեան մէջ: Յիսուս Ի-
րեններուն մասին խօսած ատեն ըսաւ, «Անոնք
աշխարհէ չեն» (Յովհ. ԺԷ. 14, 16), եւ առաքեա-
լը մեր դիրքը կ'ամփոփէ այս խօսքերուն մէջ,
«Մեր քաղաքականութիւնը երկինքն է» (Փիլ. Գ.
20): Մեր կոչումը սուրբ եւ երկնային կոչումն է
(Բ. Տիմ. Ա. 9, Եբր. Գ. 1): Հաւատացեալը պան-
դոխտ ճամբորդ մըն է այս աշխարհի վրայ
(Եբր. ԺԱ. 8-10, 13, 16, ԺԳ. 14), նա չկրնար եւ
պէտք չէ խառնուի քաղաքական վէճերու, քննա-
դատութեանց եւ յեղափոխութեանց: Նա պարտի
միայն Քրիստոսի լոյսը եւ անուշ հոտը տալ իր
շուրջը եւ սպասել Անոր վերադարձին:

4. Ի՞նչ պարտի ըլլալ հաւատացեալին յարա-
բերութիւնը այս աշխարհին եւ անոր կառավա-
րութեան հետ: Պէտք չէ մոռնալ որ հաւատաց-
եալը թէեւ «աշխարհէ չէ», բայց «աշխարհի մէջ
է» (Յովհ. ԺԷ. 11, 15) եւ ըստ այնմ ստիպուած է
յարաբերիլ տեսակէտով մը եւ պարտականու-
թիւններ ունի լեցնելիք առ այն կառավարու-
թիւնը որուն իշխանութեան եւ հովանաւորու-
թեան տակ կ'ապրի:

Ս. Գիրքը կը սորվեցնէ թէ իշխանութիւննե-
րը Աստուծմէ են եւ Աստուած ամէն իշխանու-
թենէ գերազանց իշխան է (Հոռվ. ԺԳ. 1, Կող. Ա.
16, Սաղ. ԿԲ. 41, Առակ. Ը. 15, 16, Դան. Բ. 21,
Դ. 32, Ե. 18-20, Յովհ. ԺԺ. 11, Երեմ. ԻԷ. 5,
Եսայ. ԻԴ. 28, ԽԵ. 1): Առաքեալը երբ կ'ըսէ,
«Չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ»
(Հոռվ. ԺԳ. 1) ըսել չուզեր թաղաւորական կամ
հանրապետական, կոմիւնիստական կամ ֆաշիս-
տական, բարի կամ չար, արդար կամ ան-
արդար իշխանութիւններ, հապա որեւէ իշխա-
նութիւն Աստուծմէ է, նոյնիսկ այն ատենուայ
Հոռվմի կայսր գազան Ներոնի իշխանութիւնը:

Հաւատացեալը պարտի իր վրայ եղած իշխա-
նութեանց հնազանդիլ, հպատակիլ՝ ամէն բանի
մէջ ուր այդ իշխանութիւնը Աստուծոյ պատ-
կանող եւ մեր Անոր տալիք բանը մեր ձեռքէն
առնել չուզեր (Ա. Պետ. Բ. 13-17, Տիմ. Գ. 1, 2,
Գ. Առաք. Դ. 19, 20, Ե. 29, Դան. Գ. 17, 18):

Հաւատացեալը պէտք չէ կառավարական քըն-
նադատութեանց մասնակցի (Տիմ. Գ. 2, Բ. Պետ.
Բ. 10, Յուդա Ա. 8):

Հաւատացեալը պարտի ազօթել բոլոր իշխա-

նաւորներուն համար (Ա. Տիմ. Բ. 1-3): Աստուծոյ զաւակը կրնայ շատ աւելի ազդել Հառաւարութեանց վրայ հանրային բարօրութեան համար՝ աղօթքով, քան ուրիշ հազարներ՝ հազարաւոր ուրիշ միջոցներով:

Հաւատացեալը պարտի հատուցանել պէտք եղածը ամենուն (Հռով. ԺԳ. 7):

ՆՈՅ. 8.—

«ՄԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ» (Եփես. 2. 12)

Դաս Գ. Առաք. ԺԺ. 8-12, 18-20, Եփես. 2. 10-20:

Կարգալ Բ. Կոր. Ա. 3-11

«Մեր պատերազմը արիւնի ու մարմինի հետ չէ» թէեւ, բայց շատ աւելի կատաղի է մեր թշնամին: Պատերազմ մը շահելուն առաջին պայմանն է թշնամւոյն ուժին վրայ ցած աչքով չը նայիլ եւ ըստ այնմ գինուիլ (Ղուկ. ԺԳ. 31, 32):

Ինչպէս որ մեր պատերազմը արիւնի եւ մարմինի հետ չէ, նոյնպէս ալ մեր գինուորութեան գէնքերը մարմնաւոր չեն (Բ. Կոր. Ժ. 4):

Եփեսոսի մէջ առաքեալը առաջին անգամ պայքարեցաւ հոգեւոր տգիտութեան դէմ (Գ. Առաք. ԺԺ. 2-5), յետոյ խառն, անճշմարիտ հոգեւորութեան դէմ (հ. 8-10): Այսպիսի հիմերով սկսած եկեղեցին յաղթութենէ յաղթութիւն, սրբութենէ սրբութիւն կ'երթար (հ. 10-20, տես նաեւ թուղթ առ Եփեսացիս ամբողջութեամբ):

Նկատառութեան արժանի է Գ. Առաք. ԺԺ. 19ը, ուր կ'ըսուի թէ շատերը իրենց կախարդութեան գիրքերը ամենուն առջեւ կ'այրէին. ոչ թէ կը ծախէին ուրիշ կախարդութեան հետեւողներու, հապա կ'այրէին զանոնք:

«Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը» (Եփես. 2. 13): Մեր թշնամին մերը ըլլալէ առաջ եւ աւելի՛ Աստուծոյ թշնամին է. ուստի անոր դէմ մեր պատերազմը կարելի է յաջողիլ միայն Աստուծոյ սպառազինութիւնովը գինուելով:

«Մէջքերնիդ ճշմարտութեամբ» (հ. 14). նոյնիսկ հաւատացեալներ պէտք ունին այս խրատին «Իրարու սուտ մի գրուցէք» (Կող. Գ. 9): Շատ մը վէճեր, անհամաձայնութիւններ եւ դառնութիւններ եղբայրներու միջեւ յառաջ կուգան մէկուն կամ միւսին սուտ դարձուածքով, չափազանցութեամբ, չարախօսութեամբ լուրեր տարածելէն:

«Արդարութեան զրահը» (հ. 14). զրահը կը ծածկէ կուրծքը (թոքեր եւ սիրտ) բաղդ. Ա. թես. Ե. 8 — «Հաւատքի ու սիրոյ զրահ»:

«Խաղաղութեան Աւետարանին կօշիկները» (հ. 15), ոչ թէ բոլորի՛ հապա պաշտպանուած երկար եւ դժուար ճամբորդութեան մը համար: Մենք միայն յարձակողական գէնքերու չենք կարօտիր, հապա նաեւ պաշտպանողական եւ բնականօրէն անհրաժեշտ:

«Հաւատքին վահանը» պիտի մարէ Հարին ամէն կրակոտ նետերը: Մեր հաւատքին վահանը Տէր Յիսուս Բրիտոսի պատուական արիւնն է. եւ ինչպէս ջուրը կրակը կը մարէ, այնպէս Բրիտոսի արիւնը կը մարէ Հարին ամէն կրակոտ նետերը:

«Փրկութեան սաղաւարտը»: Ասիկա փրկութեան յոյսին սաղաւարտն է (Ա. թես. Ե. 8): Թշնամին երբ ուրիշ կերպով Հյաջողիր, մեր գլխուն զարնելով կը ջանայ մեր աչքերը մեր Փրկչին զալստեան երջանիկ յոյսով երկինք նայելէն վար խոնարհեցնել: Զգաստ ըլլանք եւ փրկութեան յոյսին սաղաւարտը զուխնիս գնենք:

«Հոգիին սուրը», որ Աստուծոյ խօսքն է: Ամենէն վարպետ մարդորս հաւատացեալները անոնք են որ Աստուծոյ խօսքը գիտեն իր ամբողջութեամբ, մանրամասնութեամբ, հազարաւոր համարներ գոց սորվելով եւ զանոնք աղօթքով գործածելով:

«Ամէն աղօթքով»: Ցարդ յիշուածները գէնքերն են, իսկ աղօթքը անոնց գործածութիւնն է, աղօթքը պատերազմն է, եւ ճշմարիտ պատերազմ մը պէտք է յաղթանակով վերջանայ (Հռ. Ը. 37):

ՆՈՅ. 15.—

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԻՆ

ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆԸ

Դաս Գ. Առաք. ԻԱ. 12, 13, 27-34, Հռով. Թ. 4-5:

Կարգալ Բ. Կոր. Գ. 7-15

Գ. Առաք. թուղթ Ժ. 44-48էն մինչեւ ԻԸ. 28 ուր առաքեալը կ'ըսէ, «Ուստի յայտնի ըլլայ ձեզի որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսներուն զրկուեցաւ եւ անոնք մտիկ պիտի ընեն», կը ցուցնէ հրեաներուն մերժումը եւ հեթանոսներէն կազմուելիք եկեղեցւոյն սկսիլն ու կազմակերպուիլը (Եփես. Գ. 1-12):

Պողոս առաքեալ այս մերժումը գիտնալով հանդերձ կը հաւատար թէ «Աստուծոյ պարգեւները եւ կոչումը առանց գղջանալու են» եւ թէ «շնորհքի ընտրութեան համեմատ մնացորդ մը կայ» (Հռով. ԺԱ. 5, 29), եւ թէ ի վերջոյ